

Սպորտը մտնում է փաստաբանների առօրյա

26.11.2012 06:52



Հայաստանի փաստաբանների պալատի մարզամշակութային եւ երիտասարդ փաստաբանների ակումբներն սկսել են աշխատել մասսայական սպորտն ու առողջ ապրելակերպը փաստաբանների առօրյա մտցնելու ուղղությամբ: Ակումբների համատեղ ջանքերով արդեն կազմակերպվել է բազկամարտի առաջնություն, իսկ այսօր Ֆեմիդայի սպասավորները խուլ-համրերի մշակութային կենտրոնի մարզադահլիճում ուժերը չափեցին մինի ֆուտբոլից: Այս մարզածեն ընտրվել էր այն պատճառով, որ ոչ բոլորն ի վիճակի կլինեն խաղալ անհամեմատ մեծ՝ խոտածածկ դաշտում, թեեւ հետագայում նաեւ ֆուտբոլային մրցաշար կազմակերպելու ծրագիր կա: Որոշ թիմեր կազմավորվեցին հենց տեղում, քանի որ խաղալու ցանկություն հայտնած ոչ բոլոր փաստաբանական գրասենյակները կարող էին ամբողջական թիմեր հավաքագրել:

Աշոտ ՀԱԿՈԲՅԱՆ

Աղբյուրը՝ <http://www.aravot.am>

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })